Կ-442[27]-25.11.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նյութական պահուստի մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) **լիազոր մարմին՝** ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին.»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասից «արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի» բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «նյութական արժեքների օգտագործումը կատարվում է» բառերից հետո «արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի» բառերը հանել, իսկ «տալիս է Կառավարությունը՝» բառերից հետո «արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի պետական կառավարման համակարգի» բառերը փոխարինել «լիազոր» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ներքին գործերի նախարարության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից: